Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 20.10.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Աթանեսյանի
մասնակցությամբ անդամներ՝ Ա.Դունամալյանի
Պ. Թադևոսյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քաղաքացիական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Տ

Բողոքարկվել են քաղաքացիական իրավունք բաժնի 12-րդ, 45-րդ և քաղաքացիական դատավարության բաժնի 16-րդ, 18-րդ, 27-րդ հարցերը:

Քաղաքացիական իրավունք բաժին

Հարց 12

Հարցը նախատեսված էր «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքին վերաբերող հարցերի բաժնում և ենթադրել է, որ այդ հարցի պատասխանը պետք է տրվեր հաշվի առնելով վերոգրյալ օրենքի կարգավորումները: Մասնավորապես, տվյալ օրենքը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածով նախատեսված հայցի ապահովման միջոցների կիրառման հնարավորություն նախատեսում է՝ պայմանով, որ դրանք պետք է կիրառվեն վերոգրյալ օրենքի առանձնահատկությունների հաշվառմամբ, իսկ Հավակնորդի հիմնավորումները վերաբերում են միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածով նախատեսված այլ միջոցների կիրառման հնարավորությանը, ինչը չի բխում հարցի բովանդակությունից:

Հարց 45

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ հոդվածի 3-րդ մասով, մինչդեռ հավակնորդի կողմից ընտրվել է վերոգրյալ իրավակարգավորմանն ուղղակիորեն հակառակ տարբերակ:

Քաղաքացիական դատավարություն բաժին

Հարց 16

Created With Tiny Scanner

Հավակնորդը բերված բողոքում կարողացել է հիմնավորել նաև իր ընտրած տարբերակի սխալ չլինելը, հետևաբար գնահատականն ենթակա է բարձրացման:

Հարց 18

Նշված հարցի վերաբերյալ բողոքը հիմնավոր չէ, քանի որ քաղաքացիական, սնանկության կամ վարչական գործով օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը նախադատելի են միայն նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս, մինչդեռ հավակնորդի ընտրած տարբերակումը չի պարունակում նշում նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելու վերաբերյալ, ավելին ընտրված տարբերակում առկա է նաև քրեական գործով դատարանի օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող բոլոր փաստերի նախադատելիության մասին նշում, իսկ քրեական գործով նախադատելի կարող է լինել միայն որոշակի արարքի և դրանց կատարած անձանց վերաբերյալ փաստերը:

Հարց 27

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 11-րդ մասով և հավակնորդի կողմից ընտրվել է ակնհայտ սխալ պատասխան:

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 6278 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակի: Քաղաքացիական դատավարության բաժնից ստացված 22 միավորը բարձրացնել 1 միավորով՝ արդյունքում արձանագրել 23 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա.ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆ

Պ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Created With Tiny Scanner